ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Դրականապէս ամբողջ քաղաքը, այս րոպէին որ գրում եմ այս տողերը, զբաղուած է քաղաքային ինքնավարութեան անդամների ընտրութեան խնդրով։ Անցեալ քրոնիկում ես իմ ընթերցողներին արդէն կարճառօտ կերպով ծանօթացրի այդ ընտրութիւնների մեխանիզմի հետ։ Բայց ես հարկ եմ տեսնում ասածս կրկնել, բայց մանաւանդ լրացնել։

Քաղաքային ինքնավարութեան անդամներ Թիֆլիսում 72 հոգի պէտք է լինեն։ Դոցա ընտրում է քաղաքի հարկատու ժողովուրդը, որը, երեք կոպարի է բաժանուում. առաջին կոպարին պատկանում են ամենաշատ հարկ տուողները, որոնց անունները ես անցեալ անգամ չիշել էի։ Երկրորդ կոպարին պատկանում են մի քանի հարիւր մարդիկ. դոքա միջակ հարկ տուողներն են. վերջապէս երրորդ կոպարին պատկանում են հազարից անց մարդիկ, որոնք փոքր հարկ են վճարում քաղաքին։ Առաջին կոպարի հարկատուները ընտրում են քաղաքային ինքնավարութեան համար 24 հոգի ձայնաւորներ, երկրորդ կոպարինը՝ նոյնպէս 24 հոգի, երրորդները՝ նմանապէս 24 հոգի։ Եւ այդ ընտրութիւններն էլ կատարւում են առանձին-առանձին, մի օր նշանակւում է առաջինների համար, մի այլ օր՝ երկրորդների և մի երրորդ օր էլ՝ երրորդների համար։ Ուրեմն ընտրութիւնները պէտք է վերջանային երեք անդամով, և որովհետև մի ընտրութիւնից մինչ հետևեալ ընտրութիւնը—կիւրակիից կիւրակի—մի շաբաթ միջոց է տրւում, ամբողջ օպերացիան պէտք է վերջանար երեք շաբաթւայ մէջ։ Բայց իրողութիւնը այս է, որ նոյեմբերի 4-ին կատարւեցին առաջին կոպարի ընտրութիւնները, նոյեմբերի 11-ին եղան երկրորդ կոպարինը, մինչդեռ երրորդ կոպարի ընտրութիւնները, որ պէտք է կատարւէին նոյեմբերի 18-ին, ոչ միայն այդ օրը չը վերջացան, այլ չը վերջացան նոյն իսկ չորրորդ կիրակի օրը՝ նոյեմբերի 25-ին և ոչ իսկ մի շաբաթ էլ անց՝ դեկտեմբերի 2-ին։

Մինչ այժմ ընտրած են 24 հոգի առաջին կոպարից, 24 հոգի երկրորդից և 10 հոգի երրորդից, այնպէս որ 14 հոգի էլ պէտք է ընտրուեն։

Ստորև դնում եմ ընտրածների անունները, նշանակելով թէ իւրաքանչիւրը որքան սպիտակ և որքան սև քւէներ է ստացել և դասաւորելով ընտրածներին համաձայն սպիտակ քւէների թւին։

ԱՌԱՋԻՆ ԿՈՊԱՐ

Քւէ տուողների թիւը 44.
Մեծամասնութիւն . 23

	Սպիտակ	Սև
1. Թամամշեան, Միքայէլ (Թիֆլիսի առևտրական. բանկի կառավ).	39	13
2. Փիթոլեան Իսահակ	38	8
3. Ծուլիանեան Իսահակ	37	9
4. Փրիգոնեան Ալեքսանդր	37	9
5. Մանթաշեան Ալեքսանդր	34	12
6. Թամամշեան Գէորգ.	34	12
7. Լոտինեան Յովհաննէս.	33	13
8. Ալիխանեան Կոնստանդին	33	13
9. Խալաթեան բժիշկ.	33	13
10. Վէյսենհոֆ, ֆոն, Ստանիսլաւ.	32	14
11. Նիկոլաձէ Նիկոլայ.	31	15
12. Անանեան, բժիշկ.	31	15
13. Սարաջև	31	15
14. Մաչաբելի, Իւան, իշխ.	31	15
15. Ղորղանեան, Գրիգոր.	81	15
16. Իւանենկո, Ապոլոն	29	17
17. Ջելոկաեւ Ալեքսանդր, իշխան	29	17
18. Տէր-Աստուրեան Գէորգ.	28	18
19. Ծուրինեան, Արտեմ.	28	18
20. Միքելաձէ Վլադիմիր, իշխան.	27	19
21. Ցխուիտաձէ, ուսուց.	27	19
22. Աւլաղեան Ալեքսանդր.	27	19
23. Իզմայլեան Պաւլոս	26	20
24. Քարթաւելով Գէորգի	26	20

ԵՐԿՐՈՐԴ ԿՈՊԱՐ

Քւէ տուողների թիւն է 152
Մեծամասնութիւն . . 77

1.	Օրբելի բժիշկ	124	27
2.	Եարալեան Գրիգոր, ինժեն.	124	27
3.	Մատինեան Ալեքս. (Ներկայ քաղաքագլ.)	116	38
4.	Եւանգուլեան Գէորգ	116	38
5.	Կայդանով Վլադիմ. (պետական բանկի Թիֆ-լիսի բաժնի կառավարիչ	111	41
6.	Փրիգոնեան Գրիգոր.	107	45
7.	Կարապետեանց Նիկիտա, ինժեներ	106	46
8.	Գլաւացկի, Պլատոն.	102	50
9.	Մալինին, բժիշկ	99	53
10.	Բաբեան Եազոր, բժիշկ	97	55
11.	Ղորղանեան Դաւիթ	96	56
12.	Դաւթեան Եազոր.	95	57
13.	Յովհաննիսեան, Աբգար	95	57
14.	Աղելխանեան (Թիֆլ. փոխար. վարկի ընկ. կառավարիչ)	96	58
15.	Շահբուդաղեան (Թիֆ. առևտ. բանկի դիրեկ.	93	59
16.	Վերմիշեան Նիկ., բժիշկ	93	59
17.	Վերմիշեան Քրիստաֆոր.	93	59
18.	Զուբալով Նիկիտա (հաշտ. դատ.)	93	59
19.	Շահպարոնեանց Միքայէլ, բժիշկ	92	60
20.	Մեղրեդչեւ Եակով.	92	60
21.	Փրիդոնեան Նիկոդայոս	91	61
22.	Ղորղանեան Լուսն	89	63
23.	Անանեան Ալեքսանդր.	86	66
24.	Սաատկովսկի, Բոլեսլաւ	82	70

ԵՐԲՈՐԴ ԿՈՊԱՐ

Զալն տուողների թիւը 578
Մեծամասնութիւն. 290

Ընարուած են առ այժմ միայն 10 հետեւեալ անձերը՝

1.	Մաչաբելի, Միխայիլ, իշխան.	380	198
2.	Կոլուբանսկի Կոնստ.	363	215
3.	Զորջաձէ, Զախար, իշխան.	352	226
4.	Մաչաբելի, իշխ. Վ.	325	253
5.	Սունդուկեանց, Գաբրիէլ.	310	263
6.	Կայթմազեան, Նիկ.	304	274
7.	Շահազիզեան, Ալ.	302	278
8.	Անդրոնիկով, իշխ. Նիկ.	296	282

9. Կանդուրալեան, Վասիլ 296 282

10. Քարտւելով, Գէորգի 292 286

Այս երրորդ կարգի ընտրութիւնները, որ դեռ չեն էլ վերջացել, տեղիք տուին այնպիսի անսարանների և յուզմունքների, որ ցայժմ տեսնուած չէր։ Ընտրողները բաժանուած էին կուսակցութիւնների։ Ես հետաքրքրւեցի իմանալ թէ արդեօք ինչ գաղափարներ կան այդ իրար դէմ կատաղի կերպով կռւող կուսակցութիւնների հիմքում, և գտայ միայն մի բան, որը հետևեալն է. քաղաքային ներկայ վարչութիւնը, այսինքն գլխաւորապէս քաղաքագլուխը իւր օգնականով, նոր դումայից իրանց պաշտօններում վերընտրւելու համար, իբր թէ ամեն ջանք են գործ դնում ազդել ընտրող ժողովուրդի վերայ, որ վերջինս ձայնաւոր ընտրի միմիայն այնպիսիներին, որոնց վերայ վարչութիւնը վստահութիւն ունի՝ թէ նոքա քաղաքագլխի և նորա օգնականի պաշտօնում այժմեայ քաղաքագլխին և սորա օգնականին կ՚ընտրեն, Որպէս տեսնում էք՝ մի բնական ցանկութիւն. բայց բոլոր խնդիրը նորանումն է, որ այդ իրանց գուցէ բնական ցանկութեանը հասնելու համար, նոքա իբր թէ դիմում են այնպիսի միջոցների, որոնք մատչելի չեն ուրիշներին, այլ մատչելի են միմիայն նրանց, որոնք այս րոպէին իշխանութիւն ունին իրանց ձեռքերում։ Ինչ միջոցներ են դոքա արդեօք։ Ահա ինչ։ Երրորդ կարգի ընտրողները ամենամեծ մասամբ մանր վաճառականներ են, արհեստաւորներ, մսավաճառներ են, մրգավաճառներ են, դուխանչիկներ, որպէս նաև այնպիսի տնատէրեր, որոնք հազիւ իրանց քաղաքային տնահարկը կարողանում են վճարել։ Միւս կողմից՝ դոքա մեծ մասամբ այն մարդիկն են, որոնց վերայ մեծ ազդեցութիւն ունի քաղաքային վարչութիւնը իւր ագենտներով, որոնք են բազարի վերակացուներ և քաղաքի հարկահաններ։ Դիցուք մի անկարող տնատէր ուզում է խնդրել քաղաքային վարչութեան, որ նորա հարկը բաշխւի կամ իջեցնւի։ Քաղաքային վարչութիւնը այդ դէպքում ում պէտք է դիմէ խնդրատուի կարողութեան մասին տեղեկութիւն ստանալու համար?—Նա դիմում է քաղաքի հարկահան այն ագենտին, որը անձամբ ճանաչում է խնդրատուին։ Եթէ այդ ագենտը կը վկայէ որ իրօք խնդրատուն խեղճ է՝ քաղաքային վարչութիւնն էլ կը յարգէ խնդրատուի խնդիրքը, թէ ոչ՝ չի յարգիլ։ Այժմ երևակայէք, որ ներկայ քաղաքագլուխը իւր օգնականով և վարչութեան երկու միւս անդամներով, ուղենալով վերընտրւել իրանց պաշտօններում, քաղաքային վարչութեան բոլոր ագենտների միջոցով կամենան ճնշում գործ դնել ագենտներից կախումն ունեցող բոլոր մարդկանց վերայ, թելադրելով նրանց, որ սոքա ընտրեն այս ու այն ինչ մարդկանց որպէս ապագայ դումայի անդամներ։ Բնական է, որ այդ կարող են անել նոքա շատ աւելի մեծ հեշտութեամբ, քան նոքա, որոնք կը կամենային ուրիշ մարդկանց ձայնաւոր ընտրել։

Այժմ, ինչ հիմք կար կասկածելու թէ ներկայ քաղաքային վարչութիւնը

դիմել է մի այդպիսի միջոցի իւր թեկնածուներին ձայնաւոր ընտրելու համար, ուրեմն ինչ հիմք կար ներկայ վարչութեան դէմ նոյեմբերի 18-ի ընտրութիւնների ժողովում այն անհաճոյ խօսքերը արտասանելու և բողոքները անելու, որոնք պատճառ եղան նիստի ընդհատման և ընտրութիւնների լետաձգման։

Ահա ինչ հանգամանքը հիմք ծառայեց այդպիսի կասկածանքներին։ Որպէս ասացի, երրորդ կարգի ընտրողները մի մեծ մասով՝ քաղաքային վարչութիւնից ապէս կամ այնպէս կախումն ունեցող մարդիկ են։ Բնական է այդ պատճառով, որ նոյեմբերի 18-ի մեծամասնութիւնը առաջարկել էր ընտրել այն 24 մարդկանց, որոնք ցանկալի են ներկայ քաղաքային վարչութեան։ Բայց ներկայ վարչութեան հակառակորդներն էլ առաջարկել էին իրանց մարդկանց, այնպէս որ բոլոր առաջարկածների թիւը 120-ից անց էր։ Դէ այժմ երևակայեցէք, որ երրորդ կարգի ընտրողները մեծամասնաբար անգրագէտ է։ Եթէ դիցուք 120 տուփ առանց որոշ կարգի դարսած լինէին մէկը միւսի կողքին, ինչ հասկանայ անգրագէտ ընտրողը թէ այս ինչ տուփի մէջ, որի վերայ դիցուք գրուած է Կիրակոսով՝ սպիտակ քար պէտք է գցի թէ սև։ Բայց եթէ մեծամասնութիւնը առաջարկել էր 24 որոշ մարդկանց և այդ բոլոր 24 հոգու տուփերը մէկը միւս կողքին, այն էլ սկզբում շարուած լինեն, իսկ հակառակորդների առաջարկածները թուով դիցուք 100 տուփ՝ այն 24-ից լետոյ դարսուած լինէին, այն ժամանակ, գործը յաջողցնելու համար, վարչութիւնը կարող էր այսպիսի մի բան անել, իւր կուսակից բոլոր ժողովականներին կարող էր ասել՝ պարոններ, երբ կ'սկսի քուէարկութիւնը, մօտեցէք տուփերին և, նոյն իսկ առանց իմանալու թէ ում տուփերն են, առաջին բոլոր 24 տուփերի մէջ սպիտակ քուէ ածէք, իսկ մնացած բոլոր տուփերում սև քուէ գցեցէք։ Եւ որովհետև այդ առաջին 24 տուփերը վարչութեան թեկնածուների տուփերն են, ուրեմն նոյն իսկ քօռ-քօռ՝ վարչութեան հաճելի բոլոր մարդիկ ընտրուած կը լինէին։ Եւ իրօք, երբ հարկաւոր եղաւ տուփերը դարսել, քաղաքագլուխը կարգադրեց, որ նոքա դարսեն այն կարգով, որքան որ առաջարկուածները ձայն են ստացել, որ ասել է թէ սկզբում դարսեն վարչութեան կանդիդատները տուփերը և լետոյ ուրիշներինը։

Տեսնելով այդ բանի մէջ մի ճարպիկ մանեւր վարչութեան անդամների օգտին, հակառակորդները բողոքեցին, պահանջելով, որ տուփերը դարսեն կամ առաջարկուած մարդկանց ազգանունների այբ-բենական կարգով, կամ վիճակահանութեամբ։ Այսպիսով հակառակորդները լոյս ունէին, որ անգրագէտ ընտրողները կը չփոթեն և, խառնի խուռն դարսած 120 տուփերի մէջ, չեն իմանալ, թէ որի տուփում սպիտակ քուէ պէտք է գցեն, որի տուփում՝ սևը։

Քաղաքագլուխը չամառեց և չուզեց կատարել բողոքողների առաջարկը և այդ չամառութիւնից է, որ գործը ստացաւ բարդ կերպարանք, որով-

հետեւ քաղաքագլխի ցանկութիւնը՝ անպատճառ տուիները ասածին համեմատ դասել՝ կարծես արդարացրեց հակառակորդների կասկածը թէ քաղաքային վարչութիւնը երրորդ կարգի ձայնատուների ընտրութիւնը սարքովի է կամեցել կատարել տալ, այսինքն այն ձեւով, ինչպէս ես վերը նկարագրեցի։

Մանել աւելի մեծ մանրամասնութիւնների մէջ այդ առիթով համարում եմ ես հետաքրքրութիւնից դուրս մի բան։ Ցիշատակելու արժանի է թերեւս միայն այս, որ եթէ սկզբում խնդիրը ապ և ապ պարագլուխների մրցման մէջ էր հայ մեծամասնութեան սահմաններում, երրորդ կարգի թերի ընտրութիւններով մրցումը իւր սկզբնական բնաւորութիւնը կորցրեց՝ դառնալով մի մրցում հայ մեծամասնութեան և վրացի փոքրամասնութեան մէջ, փոքրամասնութիւն, սակայն, որը իւր աւելի հաւաք ոյժերով կարողացաւ իւր շարքերից աւելի մարդիկ առաջացնել, քան երկպառակտուած մեծամասնութիւնը։ Պէտք է ցաւել, որ խնդիրը ստացաւ այդպիսի բնաւորութիւն, քանի որ քաղաքային գործելում տարբերի խտրութիւնները բոլորովին անտեղի են, և հայ հասկացող ու չիտակ մարդը նոյնքան պէտք է պաշտպանի վրացուց, որքան վրացին՝ հայից։

Զմեռաւայ դեղոնը իւր հետ բերում է կոնցերտներ, ներկայացումներ և պերեկոյթներ, գլխաւորապէս ապ և ապ ընկերութիւնների օգտին։ Պարոն Ամիրջանեանի կոնցերտը ապա և օր. Գենջեանի կոնցերտը և յետոյ նաեւ իրան դը Ռուբինի անուանող տիկնոջ կոնցերտը—ահա առայժմ համագումարը նոյեմբերին տուած կոնցերտների, որոնցից դեռ ոչ մինը իւր վերայ լրաւած ուշադրութիւն չը դրաւեց։ Աւելի հետաքրքրական էր հայոց թատերասէրների ներկայացումը, մասնակցութեամբ գլխաւորապէս տ. տ. Քալանթարեանի, Աւթանդիլեանի և պպ. Մանդինեանի, Աշուղերդեանի և ուրիշների։ Ես այս ներկայացման մասին մի առանձին բան ասելու չունիմ. բայց որպէս յաջողակ թատերասէրների ներկայացում, ես կ'ուզեմ մի անգամ անցեալ տարի արդէն յայտնած միտքը նորից այստեղ կրկնել։ Անցեալ տարի, նոյն այդ խմբի մի ներկայացման առիթով ես յայտնեցի, որ թատերասէրների ներկայացումները իմ աչքում չունին պատուական երեւոյթի բնաւորութիւնը, այլ, որ հէնց թատերասէր խմբերի զարգանալովն է, որ մենք ունենալու ենք այն, ինչ սովորաբար անուանում են հայոց թատրոն։ Ես գտնում եմ, որ բուն դերասաններից բաղկացած մի խումբ շանս չունի մեզանում երկարատեւ գոյութիւն ունենալու. և ես կարծում եմ, որ օրինակ, ի զուր է պ. Տէր-Պետրոսեանը (Օրդուբաթեան) դիմում լրագրի միջոցով հայ մօտ ու հեռու հասարակութիւններին, յորդորելով որ բեմական տաղանդ զգացող օրիորդներ ու պարոնները դան ու խմբուեն իւր շուրջը մշտական խումբ կազմելու համար։

Ամեն ինչ, որ լարատեսութիւն պէտք է ունենալ, պէտք է նաև օրդանապէս կապված լինի կեանքի հետ։ Եւ ես գտնում եմ, որ սիրողների ներկայացումները մեզանում ոչ թէ կապրիզի ծնունդ են, այլ ծնունդ են մեր կեանքի պահանջների։ Գուցէ, այո, ժամանակով հայ հասարակութիւնը պէտք կ'ունենայ այսպէս ասած՝ փեշաքաւոր գերասանների. բայց, ամեն բան կշռած, ես վերջ ի վերջոյ գալիս եմ այս եզրակացութեան, որ փեշաքաւոր դերասանների մի լարատես խումբ մեզանում դեռ ես շանս չունի գոյութիւն ունենալու։ Սիրողների ներկայացումների մէջ, ընդհակառակը, ես նշմարում եմ իսկ և իսկ այն, ինչին որ մենք առաջիմ պէտք ունինք, միայն դոքա աւելի զարգանան և աւելի լաճախ կրկնուեն։ Թիֆլիսը այդ կողմից համարձակ կարող է առաջնակութիւն ունենալ մեր բոլոր միւս քաղաքների առաջ, գլխաւորապէս այն պատճառով, որ այդտեղ կան շատ ալնպիսի նպաստաւոր հանգամանքներ, որոնց մէջ կարող է բնատուր տաղանդը սնուել և արուեստի կատարելութեան մօտենալ, նաև առանց այդ արուեստը իւր մշտական փեշակը դարձնելու։

Թատերասէր խմբերը, ըստ իս, ներկայումս հայկական թատրոնի խնդրում մի պատմական դեր են կատարում։ Այդ խմբերի շնորհիւն է, որ հայ հասարակութիւնը ամենաբնական ճանապարհով ծանօթանալու է թատրոնի հետ և սիրելու է թատրոնական գործը։ Այդ խմբերի շնորհիւն է միայն, ըստ իս, որ հայ հասարակութիւնը թատրոնական գործը սկսելու է իւրը համարել և, իբր իւր ջանքերի ծնունդ՝ սկսելու է փայփայել նորա դաղափարը։ Ես կ'աւելացնեմ նաև, որ թատերասէրների ձեռքով պահպանուող թատրոնով աւելի, քան դերասանական ոլժերով պահպանուածը՝ կը տայ գործին ժողովրդական բնատրութիւն, առանց որի ոչ մի հասարակական հիմնարկութիւն տևողականութիւն ունենալ կարող չէ։ Թատրոնն էլ հէնց հասարակական հիմնարկութիւններից մէկն է։

ԼՈՒՍԻՆԻ

P. S. Նոր հաղորդւում է մեզ դեկա. 9-ին կատարուածքաղաքային լրացուցիչ ընտրութիւնների հետևանքը։ Ընտրած են համեմատական մեծամասնութեամբ, մասնակցութեամբ 452 ընտրող անձերի։

11	Վասիլչեւ, Պ.	264	սպիտակ քւէ
12	Բոլդարսկի, Վ.	256	»
12	Վեցել, Ֆ.	256	»
14	Դոլինսկի, Ի.	255	»
15	Պաւլենով, իշխ. Դ.	253	»
16	Բուդդանեան, Ի.	252	»
17	Բարատով, իշխ. Դ.	242	»
18	Բաքրաձէ, Ա.	237	»

19 Սարաջև, Վ. . . . . 237 »
20 Սարաջև, Ա. . . . . 237 »
21 Պաշկեւիչ, Ա. . . . . 236 »
22 Ցիցիանով, Գ. . . . . 227 »
23 Արջևանիձէ, Ն. . . . . 226 »
24 Մամացեւ, Լ. . . . . 225 »

Քաղաքային նոր գումարի համար ընտրուած 72 հոգուց 38 հոգի (52.7%) հայեր են, 22 հոգի (30.5%) վրացիներ են, 11 հոգի (15.2%) ռուսներ են, 1 հոգի գերմանացի։

Պարապմունքների համեմատ 72 հոգուց հաշուել են որ՝

Վաճառականներ և կապալառուներ են՝ 8 հոգի, բժիշկներ՝ 8 հոգի, բանկիրներ ու բանկի ծառայողներ՝ 8 հոգի, եկամուտով ապրողներ՝ 8 հոգի, ինժեներներ՝ 7, օֆիցերներ՝ 6, տէրունական ծառայողներ՝ 5, գործարանատէրեր՝ 5, գրողներ՝ 4, ուսուցիչներ՝ 3, դատաւորներ կամ նախկին դատաւորներ՝ 3, գիւղատնտեսներ և անտառագէտներ՝ 3, փաստաբաններ՝ 2 հոգի։